

Hayotz Ashkharh, December 11, 2003

ՎՐԵԺԽՆԴՐՈՒԹՅՈՒՆ ԷՐ



Գիտությունների ազգային ակադեմիայի պատմության ինստիտուտի դահլիճում նախօրեին չափազանց ուշագրավ ընթացք եւ աղմկահարույց ավարտ ունեցավ ԱՐՄԵՆ ԱՅՎԱԶՅԱՆԻ «Հայոց եկեղեցին 18-րդ դարի հայ ազատագրական շարժման քառուղիներում» դոկտորական թեզի պաշտպանությունը:

Նշենք, որ պատմաբան, քաղաքագետ Արմեն Այվազյանը երիտասարդ սերնդի մեր այն գիտնականներից է, որ բացահայտ ու հետետողականորեն հանդես է գալիս հայոց պատմության զեղծարարության փորձերի ու դրսևորումների դեմ: Զորօրինակ «Հայաստանի պատմության լուսաբանումը ամերիկյան պատմագրության մեջ. քննական տեսություն» գրքում Ա.Այվազյանը բացահայտել է հանգամանորեն ներկայացրել է մի քանի օտարերկրյա հայագետների կողմից թույլ տրված նման դրսևորումները: Հիշեցնենք նաեւ, որ վերջերս ԳԱԱ-ում տեղի ունեցած միջազգային հայագիտական խորհրդաժողովի կազմակերպիչները հայագետ Արմեն Այվազյանին չէին հրավիրել մասնակցելու այդ պատմագիտական իրադարձությանը: Ավելին, խորհրդաժողովի կազմակերպիչները նրան ուղղակի զրկել են ելույթ ունենալու հնարավորությունից: Եւ տարօրինակն այն է, որ Ա.Այվազյանի նկատմամբ նման վերաբերմունքի բուն պատճառը նրա վերոհիշյալ բացահայտումներն են:

Իսկ երեկ տեղի ունեցածն ասվածի շարունակությունը կարելի է համարել: Ուշագրավ է, որ դոկտորական թեզի պաշտպանության ժամանակ Ա.Այվազյանի երեք ընդդիմախոսներն էլ (ակադեմիկոս Մանվել Զուլալյան, դոկտոր, պրոֆեսորներ Էդուարդ Դանիելյան, Վալտեր Դիլոյան) միայն դրական բնորոշումներով անդրադարձան քննարկվող աշխատությանը: Բացասական կարծիք հայտնել էին ԵՊՀ հայոց պատմության ամբիոնը (ամբիոնի վարիչ Բաբկեն Հարությունյանը ԳԱԱ պատմության ինստիտուտի մասնագիտացված խորհրդի նախագահի տեղակալն է) եւ ԳԱԱ պատմության ինստիտուտի միջին դարերի բաժինը: Ի վերջո, հիշյալ մասնագիտացված խորհուրդը, ԳԱԱ փոխնախագահ Վլադիմիր Բարխուդարյանի գլխավորությամբ, քվեարկեց եւ 7 «կողմ», 8 «դեմ», 3 «անվավեր» քվեներով չհաստատեց ներկայացված դոկտորական թեզը: Դա ակնհայտորեն զայրացրեց ներկա գտնվող գիտնականներից շատերին, որոնք ԳԱԱ եւ պատմության ինստիտուտի նման մոտեցումը գնահատում էին որպես վրեժխնդրության դրսևորում Արմեն Այվազյանի հանդեպ: Ավելին, մարդիկ կարծիք էին հայտնում, որ ժամանակին Ա.Այվազյանի բացահայտած պատմագրական խեղաթյուրումների օտարերկրյա հեղինակները որոշակի ազդեցություն են գործել մասնագիտացված խորհրդի անդամների վրա: Եթե դա իրոք այդպես է, ապա մնում է միայն ավստոսալ, որ ներքին անհանդուրժողականությունը նման ոչ գիտական դրսևորումներ է ստանում:

Ա.Հ.